

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն անմիջականորեն հաշվետու է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին (այսուհետ՝ Նախարար): Վարչության աշխատանքները համակարգում է Նախարարի համապատասխան տեղակալը:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի Նախարարը (այսուհետ՝ նախարար):

4. Վարչությունը գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի, նախարարության և սույն կանոնադրությունների հիման վրա:

5. Վարչության անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչություն:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության նպատակներն են.

1) Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանությանը, պահպանվածությանը, օգտագործմանը և հանրահոշակմանը նպաստելը.

2) պատմության և մշակույթի հուշարձանների ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման ապահովումը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության բնագավառում աշխատանքների կազմակերպումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

7. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ բաժինները.

1) Հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բաժինը,

2) Հուշարձանների վերականգնման բաժինը,

3) Հուշարձանների պահպանության տարածքային գործունեության համակարգման բաժինը:

IV ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

9. Հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բաժնի գործառույթներն են՝

1) մասնակցում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի պետական քաղաքականության ձևավորմանը.

2) աջակցում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի միջազգային կազմակերպությունների աշխատանքներին.

3) մասնակցում է Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան հուշարձանների պահպանության բնագավառին վերաբերվող Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցների պատրաստմանը.

4) հուշարձանների ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների պետական հաշվառման, պահպանության և օգտագործման կազմակերպում.

5) սահմանված կարգով հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության նպատակով սահմանված պահպանական գոտիների նախագծերի և դրանց օգտագործման պայմանակարգերի (ռեժիմի) համաձայնեցում և հաստատման ներկայացում նախարարություն.

6) սահմանված կարգով հուշարձաններ ունեցող բնակավայրերի գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, գոտևորման նախագծերի, դրանց հատվածների կառուցապատման, հողերի նպատակային նշանակության փոխելու վերաբերյալ համաձայնություն և եզրակացություն տալը.

7) սահմանված կարգով հուշարձանների ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների հետախուզման և պեղման աշխատանքների իրականացման համար թույլտվություն տալը, դրանց գրանցումը.

8) հուշարձանների և պատմական միջավայրի տարածքներում հողային, շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքների արգելում կամ դադարեցում, եթե դրանք վնասել կամ դրանց շարունակումը կարող է վնասել հուշարձանը կամ դրա պահպանական գոտին.

9) սահմանված կարգով հուշարձանների պետական հաշվառման (կադաստրի) և շտեմարանների վարում, հուշարձանների մասին տեղեկատվության մատչելիության ապահովում.

10) պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների հետախուզման ուպեղումների համառոտ հաշվետվությունների կազմակերպում.

11) հուշարձաններն ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքները Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկերում ընդգրկելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

12) սահմանված կարգով քաղաքացիների նամակների (դիմումների և բողոքների) քննարկում, դրանցում բարձրացված հարցերի լուծմանը նպաստելը.

13) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

10. Հուշարձանների վերականգնման բաժնի գործառույթներն են՝

1) մշակում է հուշարձանների վերականգնման ոլորտի պետական, նպատակային ու զարգացման կարճաժամկետ ծրագրեր, առանձին միջոցառումներ և դրանց իրականացման ձևերն ու կարգերը և նպաստում դրանց իրականացմանը:

2) մասնակցում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակմանը՝ հուշարձանների ոլորտի մասով ներկայացնում է առաջարկություն՝ միջնաժամկետ և տարեկան բյուջետային ծախսային ծրագրերի, Նախարարության գործունեության տարեկան ծրագրի, պետական պատվերի ձևավորման վերաբերյալ.

3) ապահովում է հուշարձանների բնագավառի պետական քաղաքականության վերլուծությունը, ուսումնասիրում զարգացման միտումները և օրինաչափությունները և առաջարկություններ է ներկայացնում դրա կառավարման սկզբունքների, իրականացման ձևերի ու կարգերի բարելավման վերաբերյալ.

4) իրականացնում է հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման և դրանց տարածքների բարեկարգման նախագծային առաջադրանքների և նախագծերի վերաբերյալ համաձայնություն և եզրակացություն տալը.

5) սահմանված կարգով հուշարձանների փոփոխման և տեղափոխման վերաբերյալ եզրակացություն տալը, դրանց նախագծային առաջադրանքների և նախագծերի վերաբերյալ համաձայնություն տալը.

6) սահմանված կարգով հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման նախագծային փաստաթղթերի և աշխատանքների վերաբերյալ շտեմարանների վարում, հուշարձանների մասին տեղեկատվության մատչելիության ապահովում.

7) հուշարձանների օգտագործման ձևի, նպատակի կամ բնույթի փոփոխման վերաբերյալ համաձայնություն տալը.

8) սահմանված կարգով հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման և դրանց տարածքների բարեկարգման նպատակով հետախուզման և պեղման աշխատանքների իրականացման համար թույլտվություն տալը, դրանց գրանցումը.

9) սահմանված կարգով հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, տեղափոխման, հուշարձանների ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների հետախուզման ու պեղման իրականացման ընթացքում հուշարձանների և դրանց մասերի անվտանգության ապահովումը, կատարված աշխատանքների արդյունքների և(կամ) գիտական հաշվետվության ընդունումը.

10) հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման աշխատանքների արգելում կամ դադարեցում, եթե դրանք վնասել կամ դրանց շարունակումը կարող է վնասել հուշարձանը կամ դրա պահպանական գոտին.

11) ներկայացնում է առաջարկություններ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության բնագավառում մշակվող օրենսդրական և մեթոդական փաստաթղթերի, հանրապետական, տարեկան և հեռանկարային ծրագրերի վերաբերյալ.

12) սահմանված կարգով քաղաքացիների նամակների (դիմումների և բողոքների) քննարկում, դրանցում բարձրացված հարցերի լուծմանը նպաստելը.

13) ապահովում է նախարարության գիտամեթոդական խորհրդի աշխատանքների կազմակերպումը.

14) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

11. Հուշարձանների պահպանության տարածքային գործունեության համակարգման բաժնի գործառույթներն են՝

1) հուշարձանների պահպանության բնագավառում իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխանության նկատմամբ մոնիտորինգ (վերահսկողություն)։

2) աջակցում է հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառում հասարակական, գիտակրթական, ինչպես նաև տեղական և միջազգային հնագիտական արշավախմբերի աշխատանքներին։

3) մասնակցում և աջակցում է հուշարձանների պետական հաշվառման և փաստագրման աշխատանքներին, ներակայացնում առաջարկություն նոր հայտնաբերված հուշարձանի կարգավիճակ տրամադրելու համար։

4) սահմանված կարգով հուշարձաններ ունեցող բնակավայրերի գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, գոտևորման նախագծերի, դրանց հատվածների կառուցապատման, հողերի նպատակային նշանակության փոխելու վերաբերյալ եզրակացություն տալը։

5) իր լիազորությունների սահմաններում դադարեցնում է անօրինական հետախուզման, պեղումների, ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքները։

6) իր լիազորությունների սահմաններում առաջարկություններ է ներկայացնում հուշարձանների ուսումնասիրության, պահպանության զարգացման հնարավորությունների, դրա կառավարման սկզբունքների, իրականացման ձևերի և կարգերի բարելավման վերաբերյալ։

7) իր լիազորությունների սահմաններում իրականացնում է շրջայցեր և դադարեցնում է հուշարձանի պեղման, ամրակայման, նորոգման, վերականգնման, ինչպես նաև հողային, շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքները, եթե դրանք վնասել են կամ դրանց շարունակումը կարող է վնասել հուշարձանը կամ դրա պահպանական գոտին։

8) ֆիզիկական և իրավաբանական անձանց տալիս է տեղեկատվություն հուշարձանների պահպանության և օգտագործման վերաբերյալ։

9) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ

10) ներկայացնում է ուսումնասիրությունների արդյունքում վտանգված և վթարային վիճակում գտնվող հուշարձանների վերաբերյալ տեղեկատվություն.

11) սահմանված կարգով քաղաքացիների նամակների (դիմումների և բողոքների) քննարկում, դրանցում բարձրացված հարցերի լուծմանը նպաստելը.

12) ապահովում է հուշարձանների պահպանության պայմանագիր (պարտավորագիր) ստացումը և կնքումը.

13) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

Վ ԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Վարչության գործունեությունը ղեկավարում և համակարգում է Վարչության պետը:

13. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում են բաժինների պետերը:

14. Վարչության պետը, Վարչության պետի տեղակալը, բաժինների պետերը և աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

15. Վարչության պետի, Վարչության պետի տեղակալի, բաժինների պետերի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների դրույթները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: